Հաստատված է կառավարման խորհրդի կողմից

Խորհրդի նախագահ՝ Կ.Ջիրաքյան

«Երևանի Վ.Պետրոսյանի անվան հ.51 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարքագծի կանոններ /2022-2023 ուստարի/

1. Աշակերտը պարտավոր է կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները: Դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով ու կանոնադրությամբ սահմանված կարգով միջին դպրոցի սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝
   1) նկատողություն.
   2) խիստ նկատողություն :
2. Աշակերտները ստանում են ամբողջական տեղեկություն իրենց առաջադիմության, քննությունների և ստուգարքների արդյունքների վերաբերյալ:
3. Դասարանական միջոցառումները ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս անց են կացվում տնօրինության կամ դասղեկի համաձայնությամբ:
4. Չբացակայել անհարգելի պատճառով (120 և ավելի ժամ բացակայության դեպքում աշակերտը հանձնում է վերաքննություններ):
5. Աշակերտը կարող է դուրս գալ դպրոցից տնօրինության կամ դասղեկի հատուկ թույլտվությամբ, ծնողի գիտությամբ:
6. Աշակերտը պարտավոր է ամեն օր դպրոց ներկայանալ դասերը սկսելուց 5 րոպե առաջ՝ տնային հանձնարարությունները կատարված և տվյալ օրվա համար անհրաժեշտ պարագաներով:
7. Դպրոց գալիս պետք է հագնվել համեստ՝ ունենալ աշակերտին վայել կոկիկ տեսք:
8. Արգելվում է կապի միջոցների (հեռախոս, էլեկտրոնային ժամացույց և այլն) օգտագործումը դասապրոցեսի ընթաքցքում աշակերտի կողմից, քանի որ դրանք շեղում են աշակերտների ուշադրությունը և վնասում իրենց առողջությանը: Ամեն օր դասերի սկզբին կապի միջոցները հանձնել դասղեկներին և ետ վերցնել դասերի ավարտից հետո:
9. Հետևել դասասենյակների ամենօրյա մաքրությանը և գույքի պահպանմանը: Գույքը վնասելու դեպքում տվյալ աշակերտի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կատարում է փոխհատուցում (ամբողջական կամ մասնակի):
10. Պահպանել հիգիենայի կանոնները:
11. Ֆիզկուլտուրայի դասին ներկայանալ համազգեստով: Դասին չմասնակցելու դեպքում ներկայացնել ծնողի կամ բուժհիմնարկի կողմից գրավոր բացատրություն:
12. Հարգել միմյանց, լինել զուսպ, հավասարակշռված և հանդուրժող:
13. Դասաժամերին ծնողների մուտքը դպրոց արգելվում է: